ԿՐԿԻՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ

Լրացավ հայ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 115-ամյակը։

Այդ առթիվ երեք տարվա վերակառուցումից հետո կրկին իր դռները բացեց «հայ երգի աստեղական Հոմերոսի» տուն-թանգարանը։ Այդտեղ էին հավաքվել մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, արվեստաբաններ, գրողներ, հյուրեր։

Տուն-թանգարանում ներկա գտնվողները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան նոր ցուցադրանմուշներին, որ առաջին անգամ իրենց մշտական գրանցումն ունեցան հայրենի օջախում։ Դրանք ստալինյան բռնապետության ժամանակաշրջանում արգելված ստեղծագործություններն են, հայդուկային երգերը, որոնց մեծ մասը տպագրվել է «Դրոշակում», բանաստեղծի անձնական իրերը, արտասահմանից բերված գրականություն, փաստաթղթեր։

— Մեծ վարպետի տուն-թանգարանը վերակառուցումից հետո կրկին դարձավ մեր ազգի սիրված այցելավայրերից, մշակույթի արժեքավոր և մեզ համար կարծես սրբատեղի դարձած օջախներից մեկը,— ասաց ակադեմիկոս Էդուարդ Ջրբաշյանը։

Ներկա գտնվողները մեկ անգամ ևս լսեցին մեծ բանաստեղծի կենդանի խոսքը։ Վարպետի տուն-թանգարանի վերակառուցման գործում ցուցաբերած հոգատարության համար շնորհակալական խոսք ասաց բանաստեղծի որդին՝ Վիգեն Իսահակյանը։